Յիսուսի Քրիստոսի եւ ըստ խոստովանեաց ականատես Բանին կենաց մատակարարողաց սրբազան Առաքելոցն. եւ ըստ ուսուցման եւ հետեւման ուղղադաւան սրբոց Հայրապետացն նախնեացն եւ վերջնոցն. եւ ըստ ընտրութեան եւ դասուցութեան երկոտասան աստուածարան վարդապետացն. եւ ըստ կանոնադրութեան եւ սահմանադրութեան չորից սրբոց ժողովոցն՝ Նիկիոյ, Կոստանդնուպոլսոյ, Եփեսոսի և Քաղկեդոնի. կամաւոր յօժարութեամբ, աներկբայ հաւատով, անդառնալի յուսով եւ անվախճան սիրով, ես, Քրիստոսի նուաստ ծառայ Ցակոբ Կաթողիկոս ամենայն Հայոց, եւ Պատրիարք վաղարշապատու, լուսակառոյց մեծի եւ սրբոյ Աթոռո՛յն Էջմիածնի, գոլով ՁՔ ամօք եւ չորիւք ամսօք, ԻՁ ամ ի Հայրապետութեանս իմում, մերձ ի ժամ մահուան իմոյ ի Մայրաքաղաքս Կոստանդնուպոլիս ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի Եկեղեցւոյն. առաջի ամենատեսին Աստուծոյ. եւ առաջի պատուական եւ մեծարգոյ Եպիսկոպոսին Ղալաթիոյ, որ ի կարգէ Սրբոյն Ֆրանչիսկոսի, Տէր Գասպար Գասպարինի, վերատեսուչ Ս. Աթոռին Ճիճիթի, ի կարգէն Յիսուսեան Տէր Ֆրանչիսկոս Դի Ջիլի Ֆրանցէզ, եւտու զգաւանութիւնս իմ, զոր հաւատամ եւ դաւանիմ զոր ինչ ի վերոյ գրելոցն աւանդեցաւ մեծի եւ առաքելական ընդհանուր Սուրբ Եկեղեցւոյն Հռոմայու: , Հաւատամ եւ զնոյն ինքն զՍուրբ Եկեղեցին Հռոմայու ունել լի